ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Մարտի 30—31 տեղի ունեցավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը, որին ներկա էին ընկ. ընկ. Կ. Ս. Դեմիրճյանը, Բ. Ե. Սարկիսովը, Կ. Լ. Դալլամյանը, Դ. Ա. Մարտիրոսյանը, Լ. Ն. Ներսիսյանը, Ռ. Ք. Սվեթլովան:

Ժողովը ներածական խոսքով բացեց ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը: Նա ընդգծեց, որ այս տարի ժողովը տեղի է ունենում ՍՄԿԿ XXV համագումարի ավարտվելուց անմիջապես հետո, համագումար, որը հստակորեն ձևակերպեց սովետական հասարակության կյանքում գիտության տեղն ու դերը։ Համագումարում Լ. Ի. Բրեժնևի բովանդակալից զեկուցման մեջ, ասաց Վ. Հ. Համբարձումյանը, բարձր գնահատական տրվեց ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի գործունեությանը։ Մենք, սովետական գիտության աշխատողներս, գտնում ենք, որ դա մեզ պարտավորեցնում է էլ ավելի լավ աշխատել, բարձրացնել մեր հետազոտությունների արդյունավետությունն ու որակը, էլ ավելի ակտիվորեն մասնակցել երկրի էկոնոմիկայի և կուլտուրայի հետագա զարգացման խնդիրների լուծմանը։ Այնուհետև նա նշեց, որ 9-րդ հնգամյակի տարիներին ֆունդամենտալ և կիրառական գիտությունների մի շարք բնագավառներում ՀՍՍՀ ԳԱ գիտական կոլեկտիվները զգալի հաջողությունների հասան։ Դրա հետ միասին ակադեմիայի գործունեության մեջ դեռևս կան լուրջ թերություններ։ Այսպես, դեռևս գիտական մշակումները քիչ և դանդաղ են արմատավորվում հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ, պատշաճ մակարդակի վրա չէ գիտական հետազոտությունների որակը, որի պատճառներից մեկն է գիտական նորագույն սարքավորումների և ապարատների անբավարար օգտագործումը։ Վ. Հ. Համբարձումյանն ընդգծեց, որ անհրաժեշտ է ավելի վճռական պայքար մղել մանրաթեմայնության, ուժերի ու միջոցների փոշիացման դեմ, հստակորեն սահմանել գիտական հետազոտությունների հիմնական ուղղությունները, ամրապնդել գիտության և արտադրության կապը։ Վերջում Վ. Հ. Համբարձումյանը կանգ առավ մեր հանրապետության համար առանձնապես հեռանկարային գիտական ուղղությունների վրա։

Այնուհետև հանձնվեցին ՀՍՍՀ ԳԱ պարգևները։ Գիտությանը մատուցած մեծ ծառայությունների համար «Մեծարման գիր» ստացան ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ս. Տ. Երեմյանը և Բ. Ա. Ֆանարջյանը։

Երկարամյա բեղմնավոր գիտական գործունեության համար «Վաստակագրով» պարգևատրվեցին ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամներ Հ. Տ. Ադոնցը, Ս. Հ. Միրզոյանը, Վ. Գ. Մխիթարյանը, երկրաբանական-հանքաբանական գիտությունների դոկտոր՝ է. Ա. Խաչատրյանը, ճարտարապետության թեկնածու՝ Ա. Ա. Սահինյանը։

1975 թ. արժեքավոր գիտական հետազոտություններ կատարած և պրակտիկայում մշակումների արմատավորմանը մասնակցած մի մեծ խումբ գիտնականներ արժանացան «Դովեստագրի»։

Հանրապետության գիտությունների ակադեմիայի 1975 թ. գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցումով հանդես եկավ ակադեմիայի գլխավոր գիտնական քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ս. Ա. Բակունցը։ Նա ասաց, որ 1975 թ. ակադեմիայի գործունեությունն ընթացել է աշխատանքների ժամանակին և որակով կատարման, մշակումների արդյունավետության հետագա բարձրացման, արտադրության հետ գիտության կապի ամրապնդման և ժողովրդական տնտեսության մեջ գիտական հետազոտությունների արդյունքների ներդրման ընթացքն արագացնելու ուղղությամբ։ ՀՍՍՀ գիտական հիմնարկները 1975 թ. մշակում էին 447 թեմա ընդգրկող 130 պրոբլեմ։ Պրակտիկայում փաստորեն ներդրված է 54 աշխատանք։

Խոսելով պրակտիկայի հետ գիտության կապի ամրապնդման մասին, զեկուցողը նշեց, որ այդ գործում մեծ նշանակություն ունի մասնա-

վորապես ինստիտուտների փորձնական բազաների կազմակերպումը։ Զեկուցման մեջ մեծ տեղ հատկացվեց գիտական կոլեկտիվների գործունեության կոորդինացման հարցերին։

Ս. Ա. Բակունցը վերլուծեց ակադեմիայի նախագահության, բաժանմունքների, հրատարակչության և գրադարանների գործունեությունը։ Զեկուցողը կանգ առավ նաև կադրերի պատրաստման, գիտական նստաշրջանների, կոնֆերանսների, գիտաժողովների կազմակերպման հարցի վրա։

Զեկուցման շուրջը ծավալվեց մտքերի աշխույժ փոխանակություն, որին մասնակցեցին ակադեմիկոսներ Ա. Ռ. Հովնանեսյանը, Ա. Բ. Նալբանդյանը, Մ. Գ. Ներսիսյանը, Ս. Ն. Մերգելյանը, ակադեմիայի թղթակից-անդամներ Ա. Տ. Ասլանյանը, Մ. Լ. Տեր-Միքայելյանը։ Նրանք խոսեցին կուսակցության XXV համագումարի որոշումների լույսի ներքո ՀՍՍՀ ԳԱ գիտական հիմնարկների առջև դրված խնդիրների մասին, բացահայտեցին աշխատանքներում տեղ գտած թերություններ։

Ժողովում «Նոր տվյալներ օրգանիզմի երկաթ և պղինձ պարունակող մի քանի սպիտակուցների մասին» զեկուցումով հանդես եկավ ակադեմիկոս Հ. Խ. Բունիաթյանը։ Ակադեմիկոս Մ. Ք. Զայլախյանի զեկուցման թեման էր «Բույսերի ծաղկման կարգավորման մեխանիզմը»։

ՀՍՍՀ ԳԱ տարեկան ժողովը ակադեմիայի կանոնադրության մեջ մտցրեց մասնակի փոփոխություններ, ինչպես նաև քննարկեց կազմակերպչական հարցեր։

ՀՍՍՀ ԳԱ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Մարտի 26-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի տարեկան ժողովը։ Բաժանմունքի գիտական հիմնարկների 1975 թ. գործունեության մասին հաշվետու զեկուցումով հանդես եկավ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Ծ. Պ. Աղայանը։ Նա հանգամանորեն վերլուծեց բաժանմունքի բյուրոյի և գիտական հիմնարկների գործունեությունը և նշեց, որ նրանք հասել են զգալի հաջողություններ։ Բաժանմունքի գիտական հիմնարկները, ասաց զեկուցողը, նոր սոցիալիստական պարտավորություններ են վերցրել 1976 թ. լավագույն հաջողություններով ավարտելու համար։ Այնուհետև Ծ. Պ. Աղայանը նշեց, որ հաջողությունների կողքին առկա են նաև որոշ թերություններ, որոնց վերացումը կնպաստի բաժանմունքի գիտական հիմնարկների գործունեության էլ ավելի բարելավմանը։

Վերջում զեկուցողը շեշտեց, որ 1976 թ.՝ 10-րդ հնգամյակի առաջին տարին, պարտավորեցնում է ավելի մեծ եռանդով աշխատել հանուն սովետական գիտության հետագա զարգացման և առաջընթացի, հանուն մեր հայրենիքի բարգավաճման ու հզորացման, հանուն ՍՄԿԿ XXV համագումարի պատմական որոշումների անթերի կատարման։

Բաժանմունքների ակադեմիկոսների և թղթակից-անդամների 1975 թ. գործունեության մասին զեկուցեց ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Գ. Ա. Բրուտյանը։

Ծ. Պ. Աղայանի զեկուցման շուրջը ծավալվեց մտքերի աշխույժ փոխանակություն, որին մասնակցեցին ակադեմիկոսներ Ա. Ա. Առաքելյանը, Ա. Ս. Ղարիբյանը, Բ. Ն. Առաքելյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամներ Է. Բ. Ազայանը, Մ. Ս. Հասրաթյանը, պատմական գիտությունների դոկտոր Ա. Հ. Հարությունյանը և իրավաբանական գիտությունների դոկտոր Ա. Զ. Բեգլյանը։ Նրանք խոսեցին շրջապատող միջավայրի պաշտպանության, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչական բազայի ամրապնդման, հնագիտական հուշարձանների պահպանության, գիտական կոորդինացիայի բարելավման, բաժանմունքին կից գրադարան ստեղծելու և այլ հարցերի մասին։

Ժողովում «Պատմության փիլիսոփայության հիմնական հարցերը» զեկուցմամբ հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Վ. Կ. Զալոյանը։

Հասարակական գիտությունների բաժանմունքի տարեկան ժողովը քննարկեց նաև կազմակերպչական հարցեր։